Adobe Flash Player is no longer supported

Adobe Flash Player is no longer supported

# Քչերն են ցանկացել հայերենով սովորել

14:28 | ՀՈՒԼԻՍ 03, 2009 | ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ







«Քանի որ Սփյուռքում ապրողների միայն 5 %-ը հնարավորություն ունի մասնավոր հայկական դպրոցներ գնալու, եւ 95 %-ը նախընտրում է պետական դպրոցը, այդ իսկ պատճառով որոշեցինք ստեղծել առաջին օն-լայն հայկական դպրոցը»,- այսօր այդ մասին լրագրողներին տեղեկացրեց Հայկական Բարեգործական Ընդհանուր միության Հայկական վիրտուալ համալսարանի հիմնադիր եւ նախագահ դոկտ. Երվանդ Զորյանը:

ՀՀ վիրտուալ առաջին դասարանները բացվել են հունիսի 14-ին եւ աշխատանքները կամփոփվեն օգոստոսի 7-ին:

Աշխարհի 22 երկրներից շուրջ 150 ուսանող է մասնակցում այս դասընթացներին:

Դասավանդումը 6 լեզվով է' արեւմտահայերեն, արեւելահայերեն, անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն, իսպաներեն:

Առաջին դասընթացն անվճար է , եւ ուսանողները սովորում են հայոց լեզու, պատմություն եւ մշակույթ:

« Բացի գիտելիքներ ստանալուց, այս դասընթացը նաեւ հաղորդակցություն է սովորեցնում: Այն ոչ միայն ինֆորմացիայի, այլեւ հաղորդակցության դպրոց է»,- ասում է Երվանդ Զորյանը: Մասնակիցներից ամենափոքրը 17 տարեկան է, իսկ ամենամեծը' 82 տարեկան:

Ուսուցիչներն էլ նշում են, որ այդ ուսանողներից շատ քչերն են ցանկություն հայտնել սովորել հայերենով, ավելի շատ հայերեն բառերը գրում եւ սովորում են ֆրանսերենով կամ անգլերենով:

Աշնանային շրջանի դասընթացները կմեկնարկեն սեպտեմբերի 22-ից: Այստեղ կառաջարկվի նաեւ դասընթաց հայկական ճարտարապետության մասին: Սակայն այս դեպքում արդեն ուսանողները ստիպված կլինեն վճարել:

ՀՀ Սփյուռքի փոխնախարար Ստեփան Պետրոսյանը էլ նշեց, որ սա ազգանվեր գործ է, որը նվիրված է սփյուռքում հայապահպանությանը: «Սա ոչ թե ուսումնական, այլ հայապահպանության գործընթաց է»,- ավելացրեց Սփյուռքի փոխնախարարը:

Ի դեպ, ասուլիսին պետք է ներկա լիներ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը, սակայն 30 րոպե սպասելուց հետո ասուլիսն անցկացվեց առանց նրա:

Recommend Be the first of your friends to recommend this. Share |

Android a1+




© «A1Plus.am».Լրատվությունը արտատպելիս, ամբողջական կամ մասնակի օգտագործելիս՝ հղումը «A1Plus.am»-ին պարտադիր է:



## ԱՄԵՆԱԿԱՐԴԱՑՎՈՂ

ՀՐԱՆՏ ԲԱԳՐԱՏՅԱՆԻ ՎՐԱ ՄԱ՞ՐԴ ԵՆ ԲԵՐԵԼ 268

«ԻՆՁ ԱՅՍՊԻՍԻ ՀԱՅՐԵՆԻՔ ՊԵՏՔ ՉԷ» 185

«ԲՀԿ-Ն ՈՒ ՀԱԿ-Ը ՂԵԿԱՎԱՐՎՈՒՄ ԵՆ 155

Adobe Flash Player is no longer supported

Adobe Flash Player is no longer supported

## ՄԱՐԶԵՐ ՄՇԱԿՈՒՅԹ ՍՊՈՐՏ




ԱԽԹԱԼԱՅՈՒՄ ԳՈՐԾԱԴՈՒԼ Է ՀԱՍՈՒՆԱՆՈՒՄ

Արդեն մի քանի օր է՝ Ախթալա քաղաքի 8 մթերային խանութներից 6-ը




ՀԵՐԹԱԿԱՆ ՓԼՈՒԶՈՒՄԸ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

Շենքը շահագործման է հանձնվել 1926 թ-ին, որից հետո երբեւէ չի ե



ՓԼՈՒԶՈՒՄ Է ԳՐԱՆՑՎԵԼ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

Փլուզում է գրանցվել Գյումրու Տիգրան Մեծի 28 հասցեում